

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՓ ՀԱՆԴԵՊ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

Հին Կտակարանի գրքերից տեսնում ենք, որ երկար ճանապարհի վերջին հանգրվանը մեզ առաջնորդում է դեպի Հիսուս Քրիստոսի պատգամը, այսինքն՝ Նոր Ուխտը:

Արարչագործության իմաստը իր վերջնական և ամբողջական վիճակի մեջ հանդես է գալիս Նոր Կտակարանում Հիսուսի մեջ: Այնտեղ մենք կարդում ենք. «Սկզբից էր Բանը, և Բանը Աստուծո մոտ էր, Բանը Աստված էր: Նա սկզբից Աստուծո մոտ էր: Ամենայն ինչ նրանով եղավ. և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել է» (Հովհ. Ա 1—3):

Հովհաննեսը, վերցնելով Աստվածաշնչի առաջին տողերի բառերը, վերակարդում է Արարչության պատումը Քրիստոսի **գործունեությամբ.** պատկերների նույն զարգացմամբ ի հայտ է բերում Բանի (Աստուծո Խոսքի) մասնակցությունը արարչության մեջ:

Հասկանալի է, որ մենք, քրիստոնյաներս, Հին Կտակարանը չենք կարդում **Հին Ուխտի** առումով, այլ մենք այն կարդում ենք միշտ Նրա (Քրիստոս) հետ, Նրանով (Հիսուս):

Այդ է պատճառը, որ Մովսեսի Օրենքը մեզ չի հարկադրում այնքան, որքան աստվածաշնչական խոսքը Հիսուսով: Մենք այն (Հին Ուխտ) չենք կարդում որպես վախճան, կատարված իրողություն, ինքն իր մեջ ամփոփված: Մենք այն կարդում ենք **Նովաւ,** որի միջոցով ամեն ինչ **եղև,** որի մեջ ամեն ինչ գտնում է իր արժեքն ու ձևը, չափն ու կշիռը և ի վերջո՝ ճշմարիտ ներկայությունը: Այսպիսով արարչության պատգամը, ինչպես որ Օրենքը, կարդացվում է **Նովաւ** և միմիայն **Նովաւ: Նովաւ** և ոչ այլ մեկ ուրիշով:

Աստված հայտնության սերմերը մարդկանց սրտերի մեջ շաղ է տվել կամաց-կամաց, մինչև Իր Որդու աշխարհ գալը՝ մարդեղությամբ: Առանց Քրիստոսի անհնարին է հասկանալ Հին Կտակարանի գրությունները, առավել ևս արարչության վերաբերող պատումները: Մենք այն հասկանում ենք այն սահմաններում, որով շրջապատված է մեր ազատությունը: Մենք այն հասկանում ենք այն խորությամբ, որի միջոցով Նա (Քրիստոս) ցուցադրում է այն ամենը, ինչը բարձր է պատկերներից:

Մեր օրերում մենք հաճախ մոռանում ենք կենսալից միասնականության շաղկապը, որ է Քրիստոս, երկու Կտակարանների համար: Առանց

Քրիստոսի և Քրիստոսով մենք չենք կարող հասկանալ արարիչ Աստուծո գործունեությունը և այդ գործունեության արդյունքները:

Արդի աստվածաբանության փորձարարական ձևերը ձգտում են բացատրել (մեկնել) Աստվածաշնչի այս կամ այն տողը՝ առանձնացնելով ընդհանուր գրությունից: Դրանից է առաջանում սուր պայքարը աստվածաբանության (ճշգրիտ առումով) և բնական գիտությունների:

Հավատքը արարչագործությամբ անիրական չէ, այն միշտ էական է և ճշմարտացի, այն ամենից բանականն է և ամենից առավելը՝ համեմատությամբ բոլոր տեսակ գիտությունների առաջ քաշած վարկածների:

Արարչագործությունը արդյունքն է երկնային բանականության խոսքերի, կատարված իրողությունը «Իր»-էությունների և «ան»-տեսանելիների:

Աստվածաշունչը եղել և մնում է ճշմարիտ լույսը: Մենք չենք կարող թաքցնել մեր հավատքը արարչագործությունից դուրս, վասնզի արարչագործությունը երկնային Ուժի, նրա նախախնամության, գալիք թագավորության համապարփակ միությունն է:

Արդ, Աստված արարիչն է ամենայն ինչի, և Տերը ամենայնի, որին մենք աղոթում ենք:

Այդ նշանակում է, որ ազատությունն ու սերը, հավատքն ու հույսը անզոր գաղափարներ չեն, այլ իրական և հիմնական ուժերը արարչագործության, որից պարտադրված աղաղակում ենք. «հաւատամք ի մի Աստուած... արարիչն երկնի և երկրի և ի մի Տէր, Յիսուս Քրիստոս...»: